ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ «ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» ՍՊԸ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ООО "АРМАН-ЕРЕМ"
RA MARZ GEGHARKUNIK LLC "ARMAN-EREM"

ք.Գավառ, Գ. Միքաելյան 19 հեռ. (093) 19-66-68
г.Гавар. Г. Микаелян 19 тел. (093) 19-66-68
c.Gavar. G. Mikaelyan 19, tel. (093) 19-66-68

էլ. փոստ.armanerem@mail.ru

№ 03/23-223

«29» նոյեմբերի 2021թ.

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝
պարոն Ա. Հովհաննիսյանին

«Արման-Երեմ» ՍՊԸ-ն (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված լիցենզիա № 16992) դիտարկելով ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանի և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տեղեկատվական մոդուլային կենտրոնի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը երաշխավորում է համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմում է 65658,46 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Առդիր 4 թերթ:

Տնօրեն՝ Յու. Ավետիսյան

«Արման-Երեմ» ՍՊԸ

Հաստատում եմ՝
«29» նոյեմբերի 2023թ.

Տնօրեն՝
__________ Յու. Ավետիսյան

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 03/23-223

Ըստ ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանի և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տեղեկատվական մոդուլային կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի.

Պատվիրատու՝ «Պատմամշակութային արգելոց-թանգարանի և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ

Նախագծող՝ «Հենր Արվեստանոց» ՍՊԸ

Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման համար հիմք է ծառայել «Պատմամշակութային արգելոց-թանգարանի և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հետ կնքված պայմանագիրը, նախագծային առաջադրանքը:

Համաձայն պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքի նախատեսված է տեղեկատվական մոդուլային կենտրոնի կառուցում:

Տեղեկատվական մոդուլային կենտրոնը նախատեսված է տեղակայել ՀՀ տարբեր մարզերում:

Տեղեկատվական մոդուլային կենտրոնը իր մեջ ներառում է ընդհանուր սրահ (42քմ), ընդունարանի հատված, աշխատասենյակ (13.2քմ), տեխնիկական սենյակ (3.8քմ), սանհանգույց սահմանափակ կարողություններով մարդկանց համար (4.1քմ) և երկուական սանհանգույցներ կանանց (6.4քմ) և տղամարդկանց (6.2քմ) համար: Բոլոր սանհանգույցների մուտքերը կազմակերպված են դրսից՝ հետևի մասից: Մոդուլային կենտրոնի դիմացից և հետևից նախատեսված է ընդարձակ հարթակներ համապատասխանաբար՝ 21.1քմ եվ 20.4քմ մակերեսներով: Նախատեսված են թեքահարթակներ սահմանափակ կարողություններով մարդկանց համար: Դիմացի ճակատը իրականեցված է ընդարձակ վիտրաժային պատուհաններով: Կողային ճակատներին առկա են մեծ պատուհաններ: Հետևի ճակատի հարդարումը իրականացված է սենդվիչ վահանակներով: Մոդուլի ներսում՝ մետաղական կարկասին կից տեղադրվում է ջերմամեկուսիչ շերտը, գիպսաստվարաթուղթը: Ներքին պատերը եվ առաստաղները իրականացված են գիպսաստվարաթղթե պրոֆիլներից: Արտաքին դռները նախատեսված են ալյումինե:

Համաձայն նախագծի տեղեկատվական մոդուլային կենտրոնի հիմքերը ընդունված է տիպային: Պողպատե խողովակներից բաղկացած կարկասի վրա ձգվում են սենդվիչ վահանակները, ինչպես պատերի վրա այնպես էլ տանիքում: Սենդվիչ վահանակների տեղադրումից հետո, դրանց բոլոր հատվող հատվածներում տեղադրվում են թիթեղներ: Պատուհանների մոնտաժից հետո, դրանց կից տեղակայվում են պողպատյա խողովակներից պատրաստված ելուստներ, որոնց վրա տեղադրվում է պողպատյա երկանկյուն տավր իր մետաղական գլանակներով: Վերջիններիս էլ կցվում են փայտե երեսապատմամբ մետաղական ուղղահայց տեղակայված ձողերը, որոնք կատարում են արևապաշտպանի դեր, իրենց շարժական մեխանիզմի շնորհիվ:

Նախատեսված է արհեստական հատակի երեսապատում հարթակների և աստիճանների վրա, ինչպես նաև մետաղական բազրիքի տեղադրում:

Տանիքածածկը նախատեսված է իրականացնել սենդվիչ վահանակներով, ջրահեռացումը կազմակերպված:

Տեղադրման առանձնահատկություններից ելնելով կոյուղաջրերը, արտաքին պոմպը և սեպտիկ հորը նախագծով նախատեսված են, բայց հատակագծորեն ցույց տրված չեն, քանի որ յուրաքանչյուր մոդուլ ունի, և

նշված արտաքին ենթակառուցվածքները պետք է տեղակայվեն տեղում՝ տեղանքի ռելիեֆին համապատասխան՝ հավելյալ ճշտումներով:

Նախագծով նախատեսված է ջրամատակարարման և ջրահեռացման, էլ. մոնտաժային աշխատանքների, անվտանգության համակարգի, օդափոխության և ջեռուցման իրականացում:

Նախագծանախահաշվային փաստաթղթերով մասնավորապես նախատեսված է՝

***Համաշինարարական աշխատանքներ***

***Հողային աշխատանքներ***

- Հողային աշխատանքների իրականացում.
- Ավելացած բնահողի և շին աղբի բարձում, տեղափոխում.

***Միաձույլ ե/բետոնե կոնստրուկցիաներ***

- Նախապատրաստական շերտի իրականացում B12.5 դասի բետոնով.
- Միաձույլ ե/բ հիմքերի պատրաստում B-25 դասի բետոնից.

***Մետաղական կոնստրուկցիաների իրականացում***

- Մետաղական կարկասի կառուցում /սյուներ և հեծաններ/.
- Արտաքին պատերի իրականացում սենդվիչ պանելներով.
- Տանիքի ծածկի իրականացում սենդվիչ պանելներով.

***Պատեր և միջնորմներ, տանիք***

- Ջրակայուն 12.5մմ հաստությամբ գիպսաստվարաթղթե արտաքին պատերի իրականացում.
- Գիպսաստվարաթղթե առաստաղների իրականացում 9.5 մմ հաստությամբ.
- Գիպսաստվարաթղթե միջնորմների իրականացում 12.5 մմ հաստությամբ.
- Ջերմամեկուսիչ շերտի իրականացում 100մմ հաստությամբ հանքային բամբակով.
- Տեռասայի մետաղական բազրիքների իրականացում.
- Արևի շարժական քողարկիչի պատրաստում և տեղադրում.
- Արտաքին պատերի երեսպատում ալյուկաբոնդով.
- Աստիճանի և թեքահարթակի իրականացում.

***Հատակներ***

- Հատակի իրականացում ցինկապատ թիթեղով.
- Ց/ավազե հարթեցնող շերտի իրականացում.
- Տեռասայի կեղծ հատակի իրականացում.

***Դուռ պատուհան***

- Ալյումինե պատուհանի տեղադրում.
- Ալյումինե վիտրաժի և սլայդի տեղադրում.
- Ալյումինե դռան տեղադրում.
- Ֆասադի ձևավորում ալյումինե կոնստրուկցիաներով.

***Ներքին հարդարման աշխատանքներ***

- Պատերի և առաստաղների բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով.
- Հատակների երեսպատում կերամոգրանիտե սալիկներով.
- Պատերի երեսպատում կերամոգրանիտե սալիկներով.
- Միջսենյակային դռների տեղադրում.

***Օդափոխություն***

- Կանալային կոնդիցիոների տեղադրում.
- Արտածման կենտրոնախույս կանալային համակարգի իրականացում հակադարձ փականով.
- Օդատարների իրականացում ցինկապատ թիթեղով.
- Օդի կարգավորիչ փականների տեղադրում.
- Կառավարման մալուխի անցկացում.

***Էլեկտրամատակարարման աշխատանքներ***

- 36 մոդուլի համար լրակազմ էլ. վահանակի տեղադրում.
- Գերլարումներից պաշտպանող УЗИП 40կԱ, 1.4կՎ սարքի մոնտաժում.
- Ջերմային ռելեյով մագնիսական թողարկիչի մոնտաժում.
- LED արտաքին լուսատուների տեղադրում.
- 3x1.5մմ2, 3x2.5մմ2, 3x4մմ2 և 5x2.5մմ2 մեկուսացված պղնձե մալուխի անցկացում.
- 300Վտ և 630Վտ տաքացնող մալուխի տեղադրում.
- Անջատիչների և վարդակների տեղադրում.
- Ջերմակարգավորիչի տեղադրում.
- Ջրհոս խողովակների մեջ մոնտաժային շղթայի իրականացում.
- Հողանցման իրականացում 50x50x5մմ անկյունային պողպատից և 25x5մմ շերտապողպատից.
- Շանթընդունիչի տեղադրում Ф12մմ պողպատյա ամրանից.

***Ջրամատակարարում, ջրահեռացում***

- d=16x2.0մմ, d=20x2.5մմ և d=25x3.5մմ պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում.
- Համակարգի հիդրավլիկական փորձարկում և ախտահանում.
- d=20մմ, d=25մմ և d=32մմ գնդային փականի մոնտաժում.
- W=100լ 1.7 կՎտ էլ. կաթսայի մոնտաժում.
- Wilo Isar Boost5-E-3 պոմպից, Q=0.9լ/վ, P=0.75կՎտ, H=25մ պոմպային ինվերտորային համակարգի տեղադրում.
- W=5.0մ3/, D=2.0մ, H=1.6մ խմելու ջրի բաքի տեղադրում.
- Լվացարանների և զուգարանակոնքերի տեղադրում.
- Սանհանգույցի հայելիների տեղադրում.
- Հոսակների տեղադրում.
- d=50մմ և d=110մմ կոյուղու PVC կոյուղու խողովակների տեղադրում.
- Համակարգի հիդրավլիկական փորձարկում.
- Գրունտի մշակում և հետ լիցք.
- Կոյուղու պոլիէթիլենե d=200 խողովակի մոնտաժում.
- Կոյուղու հավաքովի հորի պատրաստում.
- Պոմպակայանի և ռեզերվուարի հորի իրականացում ե/բ կոնստրուկցիայով.

***Անվտանգության համակարգ***

- Ծխային, հրդեհային, հասցե-անալոգային օպտիկա-էլեկտրոնային դետեկտորի մոնտաժում.
- Ձեռքով գործարկվող կանչի, շչակ-ստրոբի (բարձրախոս), ձայնային ինտերֆեյս սարքավորման, հակահրդեհային ազդանշանային համակարգի տեղեկատվական վահանակ-մոդուլի /դեպի «ԱԻՆ» հեռախոսակայան/ մոնտաժում.
- Ազդանշանային համակարգի վահանակի տեղադրում, ստեղնաշարով.
- 360ե պասիվ ինֆրակարմիր տվիչի մոնտաժում.
- 12վ/3-7ա մարտկոցով անխափան սնուցման աղբյուրի տեղադրում.
- 4x0.5մմ KSPV нг(A) FRLS մալուխի անցկացում.

***Կահույք***

- Պահարանների, սեղանների և աթոռների ձեռք բերում և տեղադրում.

Նախագիծը իրականացված է ՀՀ-ում ներկայիս գործող նախագծման, քաղաքաշինական և սանիտարական նորմերին և կանոններին համապատասխան:

Ներկայացված է նախահաշիվ 65658,46 հազ. դրամ գումարով:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նախահաշվային փաստաթղթերը, «Արման-Երեմ» ՍՊԸ-ն նշում է, որ այն կազմված է ՀՀ կառավարության առ 23,06,2011թ N879-ն որոշումով հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի» համաձայն:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշվի հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը՝ 2337 և մեքենաների շահագործման ինդեքսը՝ 3222,81:

Միջին ամսական հաշվարկային աշխատավարձն ընդունված է 252984 դրամ: Նյութերի արժեքն ընդունված է 2023թ. №10 «ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով: Լիմիտավորված ծախսերը հաշվարկված է ըստ տվյալ պահին գործող նորմատիվների: Համաձայն վերը նշված դրույթի նախահաշվային արժեքները որոշելիս ընդհանուր գների հիման վրա հաշվի են առնված հետևյալ գործակիցները.

Շինարարական նյութերի արժեքին տրված է՝

1. Տրանսպորտային ծախսերը հաշվի առնող գործակից - 1.0657
2. Այլ նյութերի չափը հաշվի առնող գործակից - 1.05
3. Պահեստային, փաթեթավորման ծախսերը հաշվի առնող գործակից - 1.02

Դիտարկելով ներկայացված նյութերը «Արման-Երեմ» ՍՊԸ-ն նշում է՝

1. ՀՀ տարածաշրջանի տեղադրման վայրից կախված տեղեկատվական մոդուլային կենտրոնի նախահաշվային արժեքը ենթակա է փոփոխման:
2. Նախագծանախահաշվային փաստաթղթերում նկատված թերությունները վերացվել են փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով:

*Եզրակացություն՝*

ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանի և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տեղեկատվական մոդուլային կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը երաշխավորվում է համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Նախահաշվային արժեքը կազմում է 65658,46 հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ:

Փորձագետ՝ Է. Քոչարյան

Գ. Մարտիրոսյան

Ա, Հակոբյան

Ա. Կամիշյան